<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված կանանց և աղջիկների արագ շախմատի առաջնության

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված կանանց և աղջիկների արագ շախմատի առաջնությունը կանցկացվի Երևանում՝ Հայաստանի շախմատի ակադեմիայում (Շևչենկո 34), **2024 թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 11:00-ին:**

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցակարգ

Առաջնությունը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մասնակիցների քիչ քանակի դեպքում հնարավոր է կազմակերպել 7 խաղափուլով:

Պարգևատրում

1-ից 4-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն՝

1-ին տեղ – 50000 ՀՀ դրամ

2-րդ տեղ – 30000 ՀՀ դրամ

3-րդ տեղ – 20000 ՀՀ դրամ

4-րդ տեղ – 15000 ՀՀ դրամ

Մ8, Մ10, Մ12, Մ14, Մ16 և Մ18 տարիքային խմբերում լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները կպարգևատրվեն յուրաքանչյուրը՝ 10000-ական ՀՀ դրամ:

Հատուկ մրցանակներ <<Չեսիֆայ>> ընկերության կողմից՝

1-ին և 2-րդ տեղ – "Master" փաթեթ (մեկ ամիս)

3-ից 7-րդ տեղ - "Amateur" փաթեթ (մեկ ամիս)

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն՝

1. Հատված Բուխհոլցի (-1) գործակցի,
2. Բուխհոլցի,
3. Ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Ժամակարգ

10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Մուտքավճար

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված կանանց և աղջիկների արագ շախմատի մրցաշարի **մուտքավճարը *2000 ՀՀ դրամ է:***

**Կոչում ունեցող շախմատիստուհիների մուտքն անվճար է:*

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված կանանց և աղջիկների արագ շախմատի առաջնության **վերջնաժամկետն է 2024թ. ապրիլի 4-ը՝ ժամը 18:00:**

Գրանցվել կարող եք այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am:

Գրանցումը բանկային փոխանցման դեպքում կատարվում է հետևյալ հաշվեհամարին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

ՀՎՀՀ՝ 01515033

ԲԱՆԿ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»

Հ/Հ՝ 1510002020290100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անվանում, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, հեռախոսահամար:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105